ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-8-1-Ա

ք. Երևան 29.08.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի օգոստոսի 29-ի նիստում քննարկեց 2024 թվականի մայիսի 21-ին ներկայացուցիչ Անժելա Բոքսյանի կողմից ներկայացված դիմումը «Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ ընկերության անունով «RARE» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում դաս 32 «հանքային և գազավորված ջրեր» ապրանքների համար 2024թ. մայիսի 17-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում չկան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ ներկայացված «RARE» բառային ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 17.05.2024 թվականի դրությամբ բավականին լայն ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում դաս 32 «հանքային և գազավորված ջրեր» ապրանքների համար: Բացի այդ «Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ-ն շուկայում օգտագործում է մեկ այլ ապրանքային նշան, որը ունի պատկերային մաս, որով և հայտնի է օգտագործողներին, սակայն դիմում է ներկայացվել «RARE» բառային ապրանքային նշանը հանրահայտ ճանաչելու վերաբերյալ: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ ներկայացված «RARE» ապրանքային նշանը չի կարող հանրահայտ ճանաչվել ՀՀ-ում 2024թ. մայիսի 17-ի դրությամբ դաս 32 «հանքային և գազավորված ջրեր» ապրանքների համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 82-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում՝ միաձայն՝.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյ Ընդ Էմ Ռեյր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «RARE» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում դաս 32 «հանքային և գազավորված ջրեր» ապրանքների համար 2024թ. մայիսի 17-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը մերժել:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ